ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԺՈՂԿՈՄՍՈՎԵՏԻՆ ԿԻՑ ՊԵՏԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԱՏՈՒՆ (ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ)

ԳԻՏԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երեվան . № 1 1941 թ.

Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ԹՂԹԻ ԳՈՐԾԱՐԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

18-րդ դարի ութսունական թվականներին էջմիածնում կառուցվում է տպարան և թղթի գործարան։

Դեռևս 1771 թ. ավարտվում և գործի է դցվում տպարանը՝ կոչված լինելով բավարարելու եկեղեցական գրականության կարիքը, որ զգում էր հայ հոգեվորականությունը՝ կաթոլիկության և բողոքականության դեմ մղած իր դավանաբանական պայքարում։

1. ԹՂԹԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԹՂԹԱԳՈՐԾԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Տպարանի աշխատելուց կարճ ժամանակ անցած, պարզվում է որ նա կանգնած է աշխատանքը դադարեցնելու վտանգի առաջ, թղթի բացակայության պատճառով։ Այդ շրջանում թե՛ տպագրության և թե գրելու համար թուղթը ստացվում էր Եվրոպայից՝ Տաճկաստանի վրայով։ Հաղորդակցության ճանապարհների անկանոնության, անապահովության և հաղորդակցության միջոցների հետամնացության պայմաններում՝ թղթի հայթայթումը կապված էր մեծ դժվարությունների հետ։

Թղթի՝ Եվրոպայից ստացվելու մասին մենք ունենք որոշակի վկայություններ։ Սիմեոն Երևանցի կաթուղիկոսի հիշատակարանում, ուր քարտուղարի կողմից գրանցված են նրա նամակների համառոտ բովանդակությունները, մենք կարդում ենք.

ա) «Եւ զթուղթ Զաքարիա վարդապետին[1]) յղեաց առ սա[2]) յղել ի Պոլիս։ Եւ պատուէր՝ զի ԲՃ (200) օղմայ թուղթ, կամ որքան և գտցէ առեալ յղեսցէ։ Նաև գրեսցէ եղբորն իւրոյ՝ Խոջա Նազարէթին, զի նա ևս ԲՃ (200) կամ ԳՃ (300) օղմայ թուղթ առեալ յղեսցէ վասն տպագրատան» (1774 թ. մարտի 22-ի նամակից. «Դիվան Հայոց պատմ.» գիրք Ը, էջ 297)։

բ) Զմյուռնիայի նվիրակ և առաջնորդ Ղուկաս վարդապետը «յառաջագոյն խոստացեալ սրբազան վեհին, թե ի Ֆռանկաց թուղթ եմ բերելոց. որոյ աղագաւ և սրբազան վեհն գրեաց նմա, զի գալն իւր եթէ թուղթն եկեալ իցէ ի Ֆռանգստանու, բերցէ ընդ իւր. իսկ թէ չիցէ եկեալ, ասասցէ Աստուածատուր աղային, որ նա հետոյ յղեսցէ» (1775 թ. հունիսի 3-ի նամակից. «Դիվ. Հայոց պատմ.» գիրք Ը, էջ 428)։

Կան և բազմաթիվ այլ վկայություններ, որոնցով հաստատվում է ոչ միայն թղթի Եվրոպայից ստացվելը, այլ և նրա մեծ կարիքը, թղթի գործարանի կառուցման անհրաժեշտությունը։ Իր 1775 թ. փետրվարի 13-ի նամակում՝ ուղղված Մարտիկեանց մահտեսի Փիլիպպոսին, Սիմեոն Երևանցին գրում է. «զի վասն թղթոց կարի պակասութիւն ունէաք, զոր ըստ բաւականին առ ձեռն բերել ոչ կարէաք. և մանաւանդ՝

[1]) Պոլսի Հայոց պատրիարք։

[2]) Կարնեցի Փիլիպպոս Մարտիկեանց, որն այդ ժամանակ գտնվում էր Արտրեկիրում։